

## ԿԱՐԾԻՔ

### ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ատենախոսության ուսումնասիրության հիմքում իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանությանը նվիրված իսպանալեզու մի շարք ստեղծագործությունների համապարփակ քննությունն է, որի արդիականությունը, ինչպես փաստում է հեղինակը, պայմանավորված է ոչ միայն ցեղասպանության թեմայի նկատմամբ եղած հետաքրքրությամբ և հարցադրումների հրատապությամբ, այլև՝ արդի գրականագիտության մեջ թեմայի ուսումնասիրության բացով: Հեղինակը շեշտադրում է ատենախոսության կարևորությունը՝ ընդգծելով, որ ցայսօր հայ քննադատական միտքը դեռևս ամբողջական, ասել է թե՛՝ համապարփակ ձևով չի անդրադարձել թեմային, և սա, փաստորեն, առաջին փորձն է, որն իր հերթին ապահովում է խնդրո առարկայի գիտական նորույթը, որի արդյունքում առաջին անգամ դասակարգվում, վերլուծվում են իսպանացի հեղինակների՝ հայոց ցեղասպանության թեման պատկերող վեպեր և հրապարակախոսական հոդվածներ: Ըստ այդմ, ուսումնասիրության մեջ մանրամասն ներկայացվում են իսպանալեզու չորս հեղինակների ութ վեպեր, հրապարակախոսական հոդվածներ և քիչ թվով չափածո ստեղծագործություններ: Ինչպես նշում է ատենախոսը, իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեման արտահայտված է ինքնակենսագրական արձակի ենթատեսակներով՝ օրագիր, ուղեգրություն, հուշագրություն և ինքնակենսագրական վեպ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված են ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքը, այն է՝ կիրառվել են համադրման, զուգադրման և համեմատական վերլուծության մեթոդները, և, իհարկե, ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները:



Առաջին՝ «Խ. Ա. Գուռիարանի վեպերի գաղափարական ուղղվածությունը և կառուցվածքային առանձնահատկությունները» գլխում, ատենախոսը քննարկում, ապա ներկայացնում է Խոսե Անտոնիո Գուռիարանի «Ռումբը» և «Հայեր. մոռացված ցեղասպանություն» վեպերի սյուժետային և գաղափարական վերլուծությունը՝ փորձելով բացահայտել ցեղասպանությունը վերապրածների ժառանգների բարոյահոգեբանական խնդիրները:

Առաջին՝ «Ռումբը» վեպի ինքնակենսագրական հիմքերը և փիլիսոփայական հիմնախնդիրը» ենթագլխում, ատենախոսը փորձում է բացահայտել վեպի ստեղծման իրական դրդապատճառները, որոնք զուգորդվում են հեղինակի կյանքում տեղի ունեցած որոշ իրադարձությունների հետ: Ընդհանուր առմամբ՝ ատենախոսին հաջողվել է բացահայտել Գուռիարանի և նրա վեպի ստեղծման պատճառահետևանքային կապերը, Մադրիդում ընդհատակյա գործող «ԱՍԱԼԱ» ահաբեկչական խմբավորման գոյության և գործունեության նպատակը: Հավելենք, որ վեպում հեղինակը ներկայացնում է տարբեր դարաշրջաններում Իսպանիայում տեղի ունեցած իրադարձություններ, 1980 թվականի ուժեղացման և դրան վերաբերող որոշ մանրամասներ, նաև մի շարք լուսանկարներ, որոնք արվել են Գուռիարանի՝ Հայաստան կատարած եզակի այցի ժամանակ: «Ռումբը» գրքով հեղինակը ոչ միայն անդրադառնում է հայոց ցեղասպանությանը, այլև, գուցե ոչ անմիջականորեն, բայց և այնպես, 80-ականներից Իսպանիայում թափ առած ահաբեկչության այլ թեմաների:

«Հայեր. մոռացված ցեղասպանություն» վեպը յուրատեսակ վեպ-ուղեգրություն» երկրորդ ենթագլխում, ատենախոսը ներկայացնում է Անտոնիո Գուռիարանի երկրորդ գիրքը, որի միջոցով, փաստորեն, իսպանացի գրողն արդեն երկրորդ անգամ է անդրադառնում հայերին և հայոց ցեղասպանության խնդրին: Վեպը չունի ժանրային հստակ սահմաններ, առանձին գլուխներն ու հատվածները միավորված են հեղինակային միջանկյալ խոհերով ու մեկնաբանություններով: Գրքում, որպես բացառիկ պատկեր-խորհրդանիշ, ներկա է Արարատ լեռը՝ որպես հայոց վերածնության ու հավերժ գոյության խորհրդանիշ: «Հայեր, մոռացված ցեղասպանություն» վեպի միջոցով Գուռիարանը փորձում է ևս մեկ անգամ խոսել և



մոռացումի թմբիքից հասնել մարդկանց, «ձգտում է փշրել մոռացության ու լռության պատը», հասնել պատմական ճշմարտության ճանաչմանը»: Չնայած ստեղծագործության ընդհանուր կուռ դիպաշարի բացակայությանը և դրվագայնությանը՝ գրողը ձգտում է ստեղծել մեկ միասնական ծավալուն կտավ, որն արտացոլում է հայ ժողովրդի ազգային ոգին ու պատմությունը:

Երկրորդ՝ «*Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Գոնսալո Գուարչի վեպերում*» գլուխն իր հերթին բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «*Ինքնության որոնման խնդիրը «Հայկական տոհմաճառը» վեպում*» ենթագլխում, ատենախոսը ներկայացնում է իսպանացի ճարտարապետ, գրող Գոնսալո Էռնանդես Գուարչի հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրության առաջին՝ «Հայկական տոհմաճառը» գիրքը, որում հեղինակն իր ցասումն է արտահայտում թուրքական կառավարության իրականացրած հրեշավոր ծրագրի՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Երկրորդ՝ «*Արևմուտք-արևելք հակադրման և մշակույթների բախման խնդիրը «Հայոց կտակը» վեպում*» ենթագլխում, Ս. Կարապետյանը քննության է առնում վեպի ժանրային և գաղափարական առանձնահատկությունները՝ կարևորելով, ինչպես վեպի հերոսների կերպարային վերլուծությունը, այնպես էլ այդժմյան թուրք հասարակության իրական պատկերումը:

«*Սպիտակ լեռը*» վեպը. հայոց ցեղասպանությունը որպես «*հումանիզմի ճգնաժամի» դրսևորում*», երրորդ ենթագլխում, ատենախոսն ուսումնասիրում է պատմամշակութային, քաղաքական և կրոնական այն իրողություններն ու հակադրությունները, որոնց Գոնսալո Գուարչն այս կամ այն չափով անդրադառնում է իր «Սպիտակ լեռը» վեպում, մասնավորապես՝ արևելք-արևմուտք կրոնական և մշակութային բախումների առնչությամբ: 2008թ. հրատարակված «Սպիտակ լեռը» վեպը եզրափակում է գուարչյան եռագրությունը:

Երրորդ՝ «*Ցեղասպանության հակամշակութային և հակամարդկային բովանդակության քննադատությունը*» գլխի առաջին՝ «*Մշակույթը կենսունակության պայման Մարիա Անխելա Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպում*» ենթագլխում,



ատենախոսը կրկին անդրադառնում է վեպի ժանրային դասակարգման խնդիրներին, օտար երկրներում հանգրվանած հայերի առօրյային, նրանց ապրումներին՝ մատնանշելով, որ մինչևիսկ օտար հողի վրա հայերը փորձում են ամեն գնով պահպանել ազգային արմատները: Ըստ ատենախոսի՝ իբրև գրքի ստեղծման գաղափար Անգլադան օգտագործել է երկու կարևոր իրողություն՝ պատմությունը և մշակույթը, որոնք բեկվում են 1915 թվականի ողբերգության մեջ, հետևաբար, վեպի իմաստաբանական գիծը մշակույթի և ցեղասպանության հակադրությունն է:

Երրորդ գլխի երկրորդ՝ «Մարդու և պատերազմի փոխհարաբերության պատկերումը Մարկ Մորտեի ստեղծագործության մեջ» ենթագլխում, ատենախոսը նկատում է, որ Մարկ Մորտեի «Արարատի գավակները» վեպը շահեկանորեն տարբերվում է մինչ այդ իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանությանն անդրադարձած իր հայրենակիցների ստեղծագործություններից: Գրքի նորույթը, անշուշտ, թուրքի դրական կերպարի կերտումն է: Իսպանացի գրողը հանդես է գալիս թուրքի հոգեբանական նոր բացահայտումներով՝ նրանց տալով մարդկային, բարոյական բնութագիր:

Եզրակացությունների բաժնում ատենախոսը ի մի է բերում աշխատանքը և ներկայացնում է հիմնական դրույթները: Հարկ է նշել, որ աշխատանքը կատարված է պատշաճ մակարդակով, շարադրված է բավական սահուն կերպով: Նախանշված խնդիրները հիմնականում կարելի է համարել լուծված:

Այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ ունենք որոշ դիտարկումներ և առաջարկներ.

1. Բավական վիճահարույց է ատենախոսության վերնագիրը, մասնավորապես՝ *հայկական ցեղասպանություն* եզրույթի ձևակերպումը, այնպիսի տպավորություն է, որ ցեղասպանությունը ազգություն կամ տեսակ ունի, հետևաբար գոնե պատմագիտության տեսանկյունից նման ձևակերպումը չի կարող ընդունելի լինել, հավանաբար ճիշտ կլիներ նախապատվությունը տալ հայոց կամ հայերի ցեղասպանություն ձևակերպմանը:



2. Ս. Կարապետյանը մեծ աշխատանք է կատարել՝ քննության առնելով մեծ թվով հեղինակների՝ հայոց ցեղասպանությանն առնչվող ստեղծագործություններ, հրապարակախոսական ելույթներ, բայց և այնպես, աշխատանքում առկա են նաև իրարամերժ տողեր, օրինակ՝ 6-րդ էջում ստենախոսը փաստում է, որ «իսպանացիները բավական ուշ են արձագանքել հայոց ցեղասպանության իրողությանը, քանի որ հայերի հետ անմիջական սերտ հարաբերություններ չեն եղել, բայց *չնայած դրան հայ-իսպանական հարաբերություններն ունեն դարավոր պատմություն և միմյանց մասին երկու ժողովուրդները տեղեկություններ են հաղորդել իրենց գրավոր աղբյուրներում: Ապա շարունակում է. «Թեև հայ-իսպանական հնագույն առնչությունների մասին վկայություններ չկան...*» (մեջբերման ավարտ): Վերը նշված ձևակերպումները փոքր-ինչ խեղաթյուրում են վերը նշված տողերի իմաստային կողմը, որովհետև, եթե հայ-իսպանական հարաբերություններն ունեն դարավոր պատմություն և դրանց մասին հիշատակված են գրավոր աղբյուրներում, ապա ինչպե՞ս է ստացվում, որ դրանց մասին վկայություններ չկան:
3. Ատենախոսը պարտավոր է զգույշ լինել հատկապես՝ փաստական տվյալների մասին նշումներ կատարելիս, օրինակ՝ 12-րդ էջում ստենախոսը հավաստում է, որ Իսպանիայում հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել են Բասկերի երկրի, Կատալոնիայի և Բալեարյան կղզիների խորհրդարանները, սակայն բաց է թողնում ոչ պակաս կարևոր՝ Նավարայի խորհրդարանի՝ հայոց ցեղասպանության իրողության ճանաչման փաստը (2014 թվական):
4. Ատենախոսության ամենահաճախ նկատվող թերություններից կամ բացթողնումներից կարելի է նշել թերևս երկերի՝ հայերեն թարգմանությամբ տրվող վերնագրերի մի դեպքում՝ իսպաներեն համարժեք վերնագրերի նշումը, մեկ այլ դեպքում՝ դրանց միտումնավոր կամ պատահաբար բաց թողումը, օրինակ՝ 17-րդ էջում իսպաներեն հրատարակված որոշ երկերի վերնագրերը տրված են հայերենով, իսկ փակագծերում՝ իսպաներենով, մինչդեռ 18-րդ էջում՝ «Ռումբը» վեպի, ինչպես նաև այլ էջերում բացակայում են դրանց իսպաներեն



վերնագրերը, նույնը վերաբերում է նաև պարբերականների անվանումներին, 27-րդ էջում, օրինակ, նշված է իսպանական «Ժողովուրդ» «El Pueblo» պարբերականի հայերեն և իսպաներեն անվանումները, մինչդեռ 64-րդ էջում ատենախոսը մեջբերում է «L' Օրոր» փարիզյան թերթի անվանումը՝ արդեն ոչ թարգմանաբար և առանց ֆրանսերեն համարժեք անվանման և այլն:

5. Ատենախոսության մեջ կան անհասկանալի կամ առնվազն սխալ բառագործածության դեպքեր, օրինակ՝ ազգային տառապանքի զգացողություն (էջ 11), արյան ներքին կանչ (էջ 29), մոդայիկ գրականության շրջանակներում (էջ 34), քանդել լռությունը (էջ 51), քանդել անձի ինքնությունը (էջ 58), հերոսի ներքին մոլորվածություն (էջ 106) և այլն:
6. Ատենախոսության մեջ կան նաև անհասկանալի ձևակերպումներ: Օրինակ՝ ատենախոսության 23-րդ էջում կարդում ենք. «Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ ռումբը մարդու մեջ կատարվող պայթյունի խորհրդանիշն է, երբ մարդը հանկարծ նկատում կամ պարզապես հայտնագործում է ուրիշի, իր կողքին կանգնած անհատի ներքինը», կամ «Այնուհանդերձ, ըստ հոդվածագրի, այդ ժառանգված ցավը հարմարեցված է եղել մի ժողովրդի իդիոսինկրազիային այնպիսի ձևով, որ համարյա յուրաքանչյուր հայ տառապում է այդ ցավից՝ ամեն անգամ պակաս իրենը և ավելի խորթ» (էջ 42), կամ «Ընթերցողը, առաջ գնալով, քանդում է մի մեծ գլուխկոտրուկի քայլերը... դարսում ու վերլուծում է անընդգրկելի խճանկարի մասերը» (էջ 53) և այլն:
7. Ատենախոսության մեջ նկատելի են օտարաբանություններ՝ դիսոնանս (էջ 58), պարադիգմ, մոդել (էջ 93), սիրեններ (էջ 102), մարզինալ (էջ 111), ընդ որում, նույն բառը մեկ այլ տեղում նշվում է լուսանցքից դուրս նշանակությամբ և այլն:
8. Չնայած կատարված մեծ աշխատանքին, օգտագործված գրականության ցանկն այնքան էլ հարուստ չէ հատկապես բնագիր՝ իսպանալեզու աղբյուրներով, եթե չասենք, որ քանակապես հավասար է հայալեզու և ռուսալեզու աղբյուրներին: Խորապես համոզված ենք, որ բնագիր տեքստերի առկայությունը միայն և միայն

նպաստելու էր ատենախոսության հարստացմանն ու փաստական տվյալների ճշմարտացիությանը:

Սակայն վերոնշյալ դիտողություններն ու առաջարկությունները չեն նսեմացնում ատենախոսի իրականացրած գիտական ուսումնասիրությանը: Կարելի է ասել, որ ատենախոսությունը համապատասխանում է Մ.01.07. (արտասահմանյան գրականություն) մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իր հայցած Բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Բանասիրական գիտությունների թեկնածու դոցենտ

25.08.2020



Ռուզաննա Պետրոսյան